

Երևանի պետական համալսարանում գործող  
ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի  
Իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին  
Հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

## ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  
**Հայկ Սամսոնի Մարտիրոսյանի ԺԲ.00.01 (Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Հասմիկ Արմենի Լեյլոյանի «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները»** թեմայով ներկայացված ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Հասմիկ Արմենի Լեյլոյանի «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է «իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» դիալեկտիկական կատեգորիաներին և դրանց վերածման իրավափիլիսոփայական առումներին: Ներկայումս իրավունքի որպես կարգավորիչի ընձեռած հնարավորությունները իրականության վերածելու գործընթացում առավել կարևոր է դարձել այն գործոնների դերը, որոնք ազդեցության տարբեր ձևաչափերով պայմանավորում են իրավունքի էության ընկալումը հանրային կյանքի տարբեր ոլորտներում: Նշված գործոնների դիտարկումը իրավափիլիսոփայական ասպեկտում չափազանց բարդ իրողություն է, քանզի բախվում են պրագմատիզմի և տեսական մոտեցումների մեկնաբանությունները: Այս առումով ներկայացված ատենախոսությունը չի հանդիսանում բացառապես տեսաիրավական խնդիր, այլ պարունակում է կիրառական կարևոր բաղադրիչներ: Ինչը հատկապես ընդգծում է ընտրված թեմայի արդիականությունը և հնարավորություն է տալիս այն դասել արդի իրավագիտական մտքի զարգացման արդիական ուղղությունների շարքում:



Բացի այդ՝ ատենախոսությունը, հայրենական իրավաբանական գիտության մեջ փաստացի առաջին անգամ, համակարգված բացահայտում է «իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» հասկացություններն առանձին և փոխկապակցված, վերաիմաստավորում և համադրում է դրանց վերաբերյալ առկա փիլիսոփայական և իրավափիլիսոփայական մոտեցումները: Արդյունքում ատենախոսական հետազոտությունը լրացնում է նաև հայրենական իրավունքի տեսության մեջ առկա գիտագործնական բացը:

Հեղինակն իր մոտեցումները առաջ քաշելիս և համապատասխան վերլուծություններ կատարելիս հենվել է ինչպես դասական և ժամանակակից փիլիսոփաների, այնպես էլ մեծաթիվ իրավաբան-տեսաբանների գիտական մոտեցումների և իրավագիտության տարբեր ճյուղերի աշխատությունների վրա: Արդյունքում դրանց համադրության և սինթեզի եղանակով հեղինակը կատարել է թեմայի խորքային վերլուծություն և բազմաթիվ արժեքավոր հետևություններ, մտահանգումներ և առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ինը պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից:

Մասնավորապես, 1.1 պարագրաֆում՝ հեղինակը «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները դիտարկում է որպես դիալեկտիկական կապի մեջ գտնվող փիլիսոփայական կատեգորիաներ, որոնց իմացաբանական բնույթը, էությունն ու բովանդակությունը, ինչպես նաև առանձնահատկությունները բացահայտելու նպատակով, անդրադարձ է կատարում հարցի պատմա-տեսական հիմքերին և վերլուծում է «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից առաջադրված տարաբնույթ և որոշ դեպքերում հակասական փիլիսոփայական բնորոշումներ: Կատարված հետազոտության արդյունքում, հեղինակի կողմից ձևակերպվում է այդ հասկացությունների լայն և/կամ նեղ սահմանումները:

Ատենախոսության առանցքային արժանիքներից է 1.2 պարագրաֆում «իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» հասկացությունների հեղինակային սահմանումների ձևակերպումը: Հեղինակը ոչ միայն ամփոփում է նախկին մոտեցումները և համեմատական վերլուծության է ենթարկում «իրավական իրականություն» հասկացության հետ հաճախակի նույնացվող մի շարք այլ



հասկացություններ, այլև առաջարկում է որակապես նոր սահմանումներ, որոնք կարող են ծառայել հետագա գիտական հետազոտությունների տեսական հենք և կիրառվել ինչպես իրավունքի և պետության ընդհանուր տեսության, այնպես էլ ճյուղային իրավագիտության շրջանակներում: Այնուհետև, պարագրաֆ 1.3-ում հեղինակը հայրենական իրավաբանական դոկտրինում առաջին անգամ համակարգված ձևով ներկայացնում է «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների փոխհարաբերություններն իրավունքի և իրավական երևույթների համատեքստում:

Հատկանշական է, որ հեղինակը իրավունքը դիտարկում է ոչ թե որպես ստատիկ երևույթ, այլ որպես շարժման և զարգացման մեջ գտնվող համակարգ, որտեղ հնարավորն ու իրականը միահյուսվում են՝ արտացոլելով իրավունքի էության զարգացման դինամիկան:

Պարագրաֆ 2.1-ում հեղինակը հիմնավորում է իրավական հնարավորությունների դասակարգման տեսական և գործնական անհրաժեշտությունը, մեթոդաբանական նշանակությունը, վեր է հանում իրավական հնարավորությունների առանձին տեսակները (անհրաժեշտ և պատահական, իրական և ձևական, ընդհանուր (վերացական), մասնավոր և փաստացի)՝ բացահայտելով այդ տեսակներից յուրաքանչյուրի բովանդակությունը և առանձնահատկությունները: Հատկապես հետաքրքրական է հեղինակի մոտեցումը իրավական հնարավորությունների դասակարգումը՝ որպես մեթոդաբանության անհրաժեշտություն և գործիքակազմ իրավակարգավորման արդյունավետության գնահատման համար:

Պարագրաֆ 2.2-ում հեղինակն ուսումնասիրում է իրավասուբյեկտությունը՝ որպես հավաքական կատեգորիա և առանձին իրավական երևույթ, որը ներառում է իրավունքներ և պարտականություններ ունենալու, դրանք ինքնուրույն իրականացնելու, սեփական գործողությունների համար պատասխանատվություն կրելու ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ: Հետևաբար, իրավասուբյեկտությունը իրավունքի սուբյեկտ լինելու անձի հնարավորությունն (ունակությունն) է՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով, ինչից ելնելով, հեղինակը եզրակացնում է, որ «իրավասուբյեկտություն» հասկացության հիմքում ընկած է «հնարավորություն» իրավափիլիսոփայական կատեգորիան:

Իրավասուբյեկտության՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության տեսակի բովանդակությունը հեղինակը բացահայտում է սուբյեկտիվ



իրավունքների՝ որպես իրական իրավական հնարավորության տեսակի, բովանդակության հետ համեմատության և հակադրման եղանակով:

Պարագրաֆ 2.3-ում սահմանադրաիրավական նորմերի, որպես առանձին իրավական երևույթների շրջանակում առանցքային նշանակություն ունեցող ձևական և իրական իրավական հնարավորությունների վերաբերյալ կատարված տեսաիրավական վերլուծության ընթացքում հեղինակը մատնանշում է իրավական պրակտիկայի և տեսության մեջ առկա մի շարք կարևոր հիմնախնդիրներ, ինչպես նաև արձանագրում է, որ սահմանադրաիրավական նորմերը անքակտելիորեն և օրգանապես կապված են սոցիալական իրականության հետ, իսկ դրանց բովանդակության մեջ առկա իրավական հնարավորությունները ձևավորվում են սոցիալական իրականության մեջ գոյություն ունեցող տարաբնույթ գործոնների (իրավական, սոցիալական, քաղաքական, տնտեսական և համապատասխան այլ նախադրյալների) ազդեցության շնորհիվ:

Պարագրաֆ 3.1-ում հեղինակը առաջ է քաշում իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման մեթոդաբանական մոտեցում: Մասնավորապես, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի հետազոտությունն իրականացվում է իրավահասկացողության մեթոդաբանական դիրքերից: Այն է՝ վերլուծելով իրավունքի հնարավորությունից իրականության վերածման կառուցակարգի հետազոտության մինչ այժմ գոյություն ունեցող մեթոդաբանությունը՝ հեղինակը առաջարկում է իրավունքի և օրենքի տարբերակման նոր մեթոդաբանական գործիքակազմը, որն առավել հնարավորություններ կընձեռնի իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման հիմնախնդրի լուծման և բացատրման համար:

Վերլուծության ընթացքում հեղինակը արձանագրում է նաև, որ հասարակությունը ունակ է ինքնուրույն, անկախ պետական մարմիններից, ճանաչել «օբյեկտիվ» իրավունքը և ձևակերպել իր իրավական պահանջմունքները, որոնք կարող են նաև հակասել գործող դրական (պոզիտիվ) իրավունքին: Այս ճանապարհով ձևավորված իրավունքի բովանդակությունն ունի բոլոր հնարավորությունները վերածվել իրավական իրականության և դառնալ համընդհանուր: Սակայն այս պնդումը, առավել քան վերաբերվում է առաջադեմ ժամանակակից քաղաքացիական հասարակություններին, որոնց իրավագիտակցությունը բավարարում է ժողովրդավարական պետության կայացման համար:



Պարագրաֆ 3.2-ում հեղինակն իր կողմից առաջարկած իրավահասկացողության մեթոդաբանական դիրքերից մանրամասն քննարկում է իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման պայմանի կարևորագույն հիմնահարցը, որի շրջանակներում դիտարկում է «իրավունքի կենսագործում» հասկացությունը և վեր է հանում իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման հետևյալ առանցքային պայմանները՝ առաջին և գլխավոր պայմանը, հեղինակի տեսանկյունից, իրավունքի էության կենսագործումն է իրավական երևույթներում, երկրորդ՝ ածանցյալ պայմանը համապատասխան իրավական նորմերի կամ օրենքների (որպես իրավունքի էության արտահայտության ձևի) արդյունավետ կենսագործման հիմնախնդիրն է, այնուհետև, մի շարք օբյեկտիվ օրինաչափություններ և սուբյեկտիվ գործոններ, որոնք անկախ են իրավաստեղծագործողի կամքից, և վերջապես, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կարևոր պայման է դիտարկվում իրավունքի սուբյեկտի կամքը:

Պարագրաֆ 3.3-ը հեղինակը նվիրել է իրավական օրենքի որպես իրավական հնարավորության արդյունավետ կենսագործման/իրականացման կառուցակարգի կարևոր հատկանիշների և դրա ապահովման որոշ առումների մանրամասն վերլուծությանը: Մասնավորապես՝ իրավունքի սուբյեկտի կողմից գործողությունների, փաստական իրավաչափ վարքագծի և ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով իրավախախտումների նկատմամբ իրավական պատասխանատվության միջոցների եղանակով իրավական հնարավորությունների իրականացման և դրանց երաշխիքների հիմնահարցերին և այլն:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է փաստել, որ հեղինակը կատարել է տեսական և գործնական արժեք ունեցող լայնածավալ և ընդգրկուն հետազոտություն, համադրելով դիալեկտիկական, արժեքաբանական, համեմատական, կառուցվածքագործառութային և համակարգային մեթոդները: Աշխատանքի տեսական արժեքը կայանում է նրանում, որ այն ապահովում է իրավական կատեգորիաների՝ «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների գիտական համակարգային ըմբռնումը և վերաիմաստավորումը իրավունքի կենսագործման որակական ցուցիչների համատեքստում, ինչպես նաև ներառում է դրանց տեսական հասկացությունների ձևակերպումը: Աշխատանքի գործնական արժեքը պայմանավորված է նրանով, որ առաջարկված մեթոդաբանական լուծումները կարող են կիրառվել իրավաստեղծ, իրավաիրացնող և իրավակիրառ պրակտիկայում՝



նպաստելով իրավական նորմերի կենսագործման արդյունավետության բարձրացմանը, իրավական պետության և իրավակարգի ամրապնդմանը:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի կողմից հրապարակված վեց գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից սահմանված գիտական հանդեսներում, ինչպես նաև ներկայացված են սեղմագրում: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները, համապատասխանում է ներկայացված աշխատանքին և սեղմագրի ձևավորման համար ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից սահմանված պահանջներին:

Բայց և այնպես, ատենախոսության բովանդակությունը և որակն ավելի կշահեր հեղինակի կողմից հետևյալ հարցերին առանձին անդրադառնալու և դրանց վերաբերյալ հրապարակային պաշտպանության ընթացքում դիրքորոշում և պարզաբանում ներկայացնելու դեպքում:

1. Իրավունքի հնարավորությունից իրականության վերածման գործընթացում էական նշանակություն ունի կառավարման համակարգի արդյունավետությունը, որի արտահայտություններից է քաղաքական կամքի խնդիրը: Կարևոր է դրանց առկայության և իրագործելիության աստիճանի վերաբերյալ հեղինակի մեկնաբանությունները:

2. Էական է նաև իրավունքի հնարավորությունից իրականություն անցման փուլում ռիսկերի գնահատման խնդիրը, ինչպես օրինակ կոռուպցիոն ռիսկերը, կարողությունների գնահատման հնարավորությունների ասպեկտները: Վերոնշյալին ևս պետք է անդրադառնա ատենախոսը՝ դիրքորոշումն ամբողջացնելու նպատակով:

Վերը նշված նկատառումները և/կամ առաջարկությունները, այնուամենայնիվ, կրում են պարզաբանման, բանավիճային բնույթ, և ամենևին չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները և պայմանավորված են աշխատանքն առավել ամբողջացնելու ցանկությամբ: Հասմիկ Արմենի Լեյլոյանի ատենախոսությունը բնութագրվում է գիտական ինքնուրույնությամբ, հստակ մեթոդաբանությամբ, ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով և աչքի է ընկնում աշխատանքում դրսևորված իրավափիլիսոփայական մտածողության խորությամբ, ինչպես նաև հարուստ տեսական հիմքով:



Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ընդդիմախոսության ներկայացված Հասմիկ Արմենի Լեյլոյանի «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» վերտառությամբ ատենախոսությունը՝ հանդիսանալով համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն, համապատասխանում է ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությանը, համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածուի» գիտական աստիճանի շնորհման:

**Պաշտոնական ընդդիմախոս՝**

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
պետության և իրավունքի տեսության ու պատմության  
ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների  
թեկնածու**

**Հայկ Սամսոնի Մարտիրոսյան**

**26.12.2025թ.**

**Պաշտոնական ընդդիմախոսի իրավաբանական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Հայկ Սամսոնի Մարտիրոսյան ստորագրությունը հաստատում եմ՝**

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
դեկանի տեղակալ**



**Աշոտ Պետրոսյան**

**«26» դեկտեմբերի 2025թ.**